



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻ ՏՕՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ
 ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՉ**

Համաձայն մեր եկեղեցւոյ տօնացոյցին, Երկուշաբթի, Յունուար 15-ը տօնն է Սուրբ Յովհաննու Կարապետին, եւ անուանակոչութեան օրը՝ Հոլիվուտի Սուրբ Կարապետ Մայր եկեղեցւոյ:

Այս տօնին առիթով, Կիրակի, Յունուար 14-ին, Թեմիս բարեջան Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ա. Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցէ, սրբանկարներու օծում պիտի կատարէ, օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ եւ մատաղօրիներէի արարողութիւն պիտի կատարէ Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ մէջ:

Ս. Սեղանին պիտի սպասարկեն Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տ. Վիգէն Ա. Զինյ. Վասիլեան:

Յաւարտ Ս. Պատարագի, տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան արարողութիւն բոլոր այն բարերարներուն եւ նուիրեալներուն հոգիներուն համար, որոնք ծառայած են ի պայծառութեան մեր եկեղեցւոյ ու առյաւետ բաժնուած են մեզմէ:

Եկեղեցական արարողութենէն ետք, ներկաները պիտի համախմբուին եկեղեցւոյ սրահը, ուր հովիւին եւ հոգաբարձութեան նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենայ սիրոյ սեղան:

Ըստ տարիներու աւանդութեան, հոգաբարձութիւնը պիտի պատուէ եկեղեցւոյ նուիրեալ ծառայողները:

**PRELATE TO CONDUCT HOLY MASS AT
 ST. GARABED CHURCH**

According to our church calendar, Monday is the Feast of St. John the Baptist and the name day of St. Garabed Church of Hollywood.

On the occasion of this feast, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will conduct Holy Mass and the anointing of saints' icons, deliver the sermon, and preside over "madaghorhnek" at St. Garabed Church.

Very Rev. Fr. Barthev Gulumian, Co-Director of the Prelacy Christian Education Department, and Archpriest Fr. Vicken Vassilian will assist at the altar.

Following Holy Mass, requiem service will take place in remembrance of all the benefactors and volunteers who selflessly served the church.

At the conclusion of services, a reception will take place at the church hall as well as the traditional honoring of a devoted servant of the church.

**ԿԼԵՆՏԵՅԼԻ ՀՐՇԷՋՆԵՐԸ ԱՄԱՆՈՐԵԱՆ ՆՈՒԵՐՆԵՐ
ԿԸ ԲԱԺՆԵՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒ**

Կիրակի, Յունուար 7-ին, Նոր Տարուան եւ Ս. Ծննդեան ուրախ տօներուն առթիւ, Կլենտէյլ քաղաքի հրշէջներու խումբ մը այցելեց Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցի, եւ Կիրակնօրեայ վարժարանի աշակերտներուն նուէրներ բաժնելով, տօնական օրերը շնորհաւորեց ու բարի մաղթանքներ փոխանցեց:

**GLENDAL FIRE DEPARTMENT PRESENTS GIFTS TO
ST. MARY'S CHURCH SUNDAY SCHOOL STUDENTS**

On Sunday, January 7, on the occasion of the New Year and Christmas, members of the Glendale Fire Department visited St. Mary's Arm. Church in Glendale, where they presented gifts to Sunday School students and conveyed their best wishes.